ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Հ-14

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտը -ը, ի դեմս տնօրեն Ժիրայր Վարդանյանի (կազմակերպության անվանումը) (անուն, ազգանուն) (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ (Ծրագրի անվանումը) ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 120 031,1 /հարյուր քսան միլիոն երեսունմեկ հազար հարյուր/ ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն

հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 120031,1 /հարյուր քսան միլիոն երեսունմեկ հազար հարյուր/ ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 110428.612 /հարյուր տաս միլիոն չորս հարյուր քսանութ հազար վեց հարյուր տասներկու/ ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աճի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ (կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Աճառյան 1 (հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	_"Պրոմեթեյ բանկ" ՍՊԸ կոդ 00805541 Հ/հ 1660000258650100 (բանկային վավերապայմանը)
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ժ. Վարդանյան (անուն ազգանուն)
_____ (ստորագրության)	_____ (ստորագրության)
Գ.Տ.	Կ.Տ.

«27» 01 2015.թ. Հավելված 1
N 4-14 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական գործունեության 2011-2015թթ. հնգամյա ծրագիրը վերաբերվում է "Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգո-աշխարհագրական ասպեկտները" թեմատիկայի, որն անմիջականորեն բխում է 2010-2020թթ. ինստիտուտի զարգացման և ռազմավարության ծրագրի հայեցակարգից: Նշված թեմայի շրջանակներում ստորև ներկայացվում է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագիրը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Հայաստանի և Արցախի ժամանակակից և բրածո բույսերի տաքսոնոմիական ու ֆլորիստիկ ուսումնասիրություն

- ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի Հերբարիումի տիպային /Էտալոնային/ մոտ 1300 նմուշների տվյալների բազայի ստեղծում, թվայնացում և տեղադրում Ինտերնետում;
- Հայաստանի Ֆլորայի դաշտային ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր շրջաններում;
- Polygonum, Fallopia, Persicaria, Bistorta, Acnogonon, Alchemilla, Scilla, Gagea, Thymus, Paeonia, Psephellus, Vitis, Juniperus ցեղերի և Resedaceae, Capparidaceae, Cucurbitaceae, Biebersteiniaceae, Loranthaceae, Orobanchaceae, Ulmaceae, Salicaceae, Caryophyllaceae ընտանիքների կարգաբանական մշակում;
- Սիսիանի բրածո ֆլորայի Betula, Tilia, Fraxinus, Carpynus ցեղերի և Rosaceae ընտանիքի տեսակների տաքսոնոմիական մշակում;
- Հորթունի բրածո ֆլորայի Yuglandaceae և Betulaceae ընտանիքներին պատկանող տեսակների տաքսոնոմիական մշակում:

Հայաստանի Ֆլորայի տեսակների կենսակարգաբանական (անատոմիական, պալինոլոգիական, ցիտոլոգիական) ուսումնասիրություն

- Colchicum ցեղի (Միաշաքիլավորների) աֆրիկյան ցեղակիցների ուսումնասիրություն;
- Հայաստանի ծառատեսակների ծաղկափոշու մորֆոլոգիայի ուսումնասիրություն և տեղեկատվական բազայի կազման աշխատանք;
- հազվագյուտ և անհետացող (Հայաստանի կարմիրգրքային) տեսակների կարիոկարգաբանական ուսումնասիրություն:

Համաշխարհային դենդրոֆլորայի արժեքավոր ներկայացուցիչների ներմուծում և կլիմայավարժեցում, Հայաստանի արիդային տարածաշրջանների արժեքավոր ու հազվագյուտ ծառաբույսերի էկոլոգոկենսաբանական առանձնահատկությունների բացահայտում և օգտագործման հեռանկարների մշակում:

- Հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտու դենդրոֆլորայի բարձր գեղազարդ տեսակների ներմուծում և հավաքածուների ստեղծում;
- Հայաստանի արիդային գոտու դենդրոֆլորայի տնտեսապես արժեքավոր բարձր գեղազարդ տեսակների ուսումնասիրություն՝ անտառաբուծության և կանաչապատման մեջ ներդնելու նպատակով,
- Հազվագյուտ ու էնդեմիկ ծառաբույսերի բազմացման *in situ* պահպանության արդյունավետ եղանակների մշակում;

- Հայաստանի Բուսաբանական այգիներում հազվագյուտ ու վտանգված ծառաբույսերի *in situ* պահպանության էքսպոզիցիոն հավաքածուի ստեղծում:

Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և դժվար ծլող տեսակների բազմացում մեկուսացված կուլտուրայի միջոցով, դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություն:

- Fabaceae ընտանիքի որոշ տեսակների (Astragalus hamosus, Lathyrus chlorantus, Onobrichis meschethica) վերարտադրողական կենսաբանության ուսումնասիրություն;
- Աշակման (կուլտիվացման) պայմանների ընտրություն Calligonum polygonoides մերիկլոնների արմատավորման ինդուկցիայի համար: Potentilla porphyrantha հազվագյուտ կարմիրգրքային տեսակի համար մեկուսացված կուլտուրայի ստացում;
- Կարմիրգրքային 5 (Զոնջոլենի փետրատերև, Գեղածնկիկ մատիտեղնման, Մատնունի ծիրանավոր, Ջնծաղիկ արտյուշենկոյի և Խնկեղեկ ճահճային) և ինվազիվ 3 (Ակացիա սպիտակ, Կաթնափուշ բծավոր և Երկնածառ սովորական) տեսակների ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրում:
- Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և էնդեմիկ տեսակների *ex situ* բազմացում բաց գրունտում՝ "Հայաստանի ֆլորայի և բուսականության էքսպոզիցիոն" հողամասում:

Հայաստանի բնական էկոհամակարգի (բնակմիջավայրերի) դասակարգման սխեմայի ստեղծում՝ հանրապետության բուսականության ներկայիս վիճակի արտացոլման նպատակով:

- Հայաստանում Ամբրոզիա օշինդրատերևային ինվազիվ տեսակի տարածվածության հետազոտումը և հետագա տարածման կանխատեսումը ու մոդելավորումը:
- Հայաստանի միջին լեռնային գոտու հազվագյուտ էկոհամակարգերի դաշտային ուսումնասիրություն և դասակարգում:

4. Նկարագրված գիտական աշխատանքների արդյունքների ներկայացումը կարտահայտվի հոդվածների, հաշվետվությունների, միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահությունում զեկուցումներով հանդես գալու ձևով:

Տնօրեն՝ _____ (Ժիրայր Վարդանյան)

Հավելված 2
«27» 01 2015թ.
N 274 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվա-նումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
2015թ. 1-ին եռամսյակ		ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի Հերբարիումի տիպային /Էտալոնային/ մոտ 1300 նմուշների տվյալների բազայի ստեղծում, թվայնացում և տեղադրում Ինտերնետում; Polygonum, Fallopia, Persicaria, Bistorta, Acnogonon, Alchemilla, Scilla, Gagea, Thymus, Paeonia, Psephellus, Vitis, Juniperus ցեղերի կարգաբանական մշակում; Մշակման (կուլտիվացման) պայմանների ընտրություն Calligonum polygonoides մերիկլոնների արմատավորման ինդուկցիայի համար: Հայաստանում Ամբրոզիա օշինդրատերևային ինվազիվ տեսակի տարածվածության հետազոտումը և հետագա տարածման կանխատեսումը ու մոդելավորումը:	գործուղումներ Բերլին՝ մոլեկուլյար հետազոտությունները կատարելու նպատակով; Մորֆոլոգո- հերբարիումային ուսումնասիրություն; Երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական; մեկուսացված կուլտուրաների մեթոդիկաներ	Անալիզների արդյունքների ամփոփում հոդվածների հանձնում: Գիտական աշխատողների զեկուցումներ Ինստիտուտի գիտ. խորհրդներում	2015թ. Մարտի 31-ը	**24006,2**
2015թ. 2-րդ եռամսյակ	"	Հայաստանի Ֆլորայի դաշտային ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր շրջաններում; Resedaceae, Capparidaceae, Cucurbitaceae ընտանիքների կարգաբանական մշակում: Սիսիանի բրածո ֆլորայի Betula, Tilia, Fraxinus, Carpynus ցեղերի և Rosaceae ընտանիքի տեսակների տաքսոնոմիական մշակում; Colchicum ցեղի (Միաշաքիլավորների) աֆրիկյան ցեղակիցների ուսումնասիրություն; Հայաստանի ծառատեսակների ծաղկափոշու մորֆոլոգիայի ուսումնասիրություն և տեղեկատվական բազայի կազման աշխատանք; հազվագյուտ և անհետացող (Հայաստանի կարմիրգրքային) տեսակների կարիոկարգաբանական ուսումնասիրություն: Fabaceae ընտանիքի որոշ տեսակների	Մորֆոլոգո- հերբարիումային ուսումնասիրություն; Երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական; մեկուսացված կուլտուրաների մեթոդիկաներ	Հոդվածների տպագրում Մասնակցություն Միջազգային կոնֆերանս-ներում.	2015թ. Հունիսի 30-ը	**30007,8**

		(Onobrichis meschethica) վերարտադրողական կենսաբանության ուսումնասիրություն; Հայաստանի միջին լեռնային գոտու հազվագյուտ էկոհամակարգերի դաշտային ուսումնասիրություն և դասակարգում:				
2015թ. 3-րդ եռամսյակ		Biebersteiniaceae, Loranthaceae, Orobanchaceae, Ulmaceae ընտանիքների կարգաբանական մշակում: Հորթունի բրածո ֆլորայի Yuglandaceae և Betulaceae ընտանիքներին պատկանող տեսակների տաքսոնոմիական մշակում: Colchicum ցեղի (Միաշաքիլավորների) աֆրիկյան ցեղակիցների ուսումնասիրություն; Fabaceae ընտանիքի որոշ տեսակների (Astragalus hamosus,) վերարտադրողական կենսաբանության ուսումնասիրություն; Սերմերի հավաքում հողամասում; մերձարևադարձային և արևադարձային բույսերի գիտական հավաքածուի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ: Բուսաբանական այգու ծաղկաթմբերի խնամք, տնկանյութի հավաք և նախապատրաստում հաջորդ վեգետացիոն շրջանի համար, տարբեր ծաղկային հավաքածուների ստեղծում:	Մորֆոլոգո- հերբարիումային ուսումնասիրություն; Աշխարհագրական, Անատոմիական, Կարիոլոգիական, Պալինոլոգիական, Երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական; մեկուսացված կուլտուրաների մեթոդիկաներ	Հոդվածների տպագրում Մասնակցություն Միջազգային կոնֆերանս-ներում.	2015թ. Սեպտեմ բերի 30-ը	**30007,7**
2015թ. 4-րդ եռամսյակ		Ulmaceae, Salicaceae, Caryophyllaceae ընտանիքների կարգաբանական մշակում: Դաշտային աշխատանքների ժամանակ հավաքված հերբարիումային նյութի մշակում, տվյալների վերլուծություն: Ինդիկատոր տեսակների ցուցակի լրացումներ: Հաջորդ տարիների աշխատանքային պլանի մշակում: Fabaceae ընտանիքի որոշ տեսակների (Lathyrus chlorantus) վերարտադրողական կենսաբանության ուսումնասիրություն; Potentilla porphyrantha հազվագյուտ կարմիրգրքային տեսակի համար մեկուսացված կուլտուրայի ստացում; Կարմիրգրքային 5 և ինվազիվ 3 տեսակների ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրում:		Հոդվածների տպագրում Հաշվետվության պատրաստում	2015թ. Դեկտեմ-բերի 30-ը	**36009,4**
Ընդամենը		**120031,1**				

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ Ռ. Ասրտիրոսյան

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

Տնօրեն Ժիրայր Վարդանյան

«27» 01 2015.թ. Հավելված 3
N 2-14 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրեն
(կազմակերպության անվանումը)
Ժիրայր Վարդանյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել
(անուն ազգանուն)
«27» 01 2015թ. N 2-14 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 120031,1 /հարյուր քսան միլիոն երեսունմեկ հազար հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրության)

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ
(կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Աճառյան 1
(հասցե)
"Պրոմեթեյ բանկ" ՍՊԸ
կոդ 00805541 Հ/հ 1660000258650100
(բանկային վավերապայմանը)
Տնօրեն՝ Ժ. Վարդանյան
(անուն ազգանուն)

(ստորագրության)

Հավելված 4
«27» 01 2015թ.
N 2-14 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	78531,1	15706,2	19632,8	19632,8	23559,3
2	տնտեսական և այլ ծախսեր	41500	8300	10375	10375	12450,1
3	ընդամենը	120031,1	24006,2	30007,8	30007,8	36009,4

Տնօրեն՝ _____ (_____Ժիրայր Վարդանյան_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (_____Սուսաննա Մարտիրոսյան____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.